

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

08.08.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Օհանյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Սահակյանը, Ս.Ասրյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ն.Հովհաննիսյանը - մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում /Գ. Մարկոսյան, ստորաբաժանումների ղեկավարներ/
2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին /Ա.Ղուկասյան/
3. Այլ հարցեր

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մարզպետի կողմից տրված գրավոր և բանավոր հանձնարարականների կատարման վերաբերյալ սահմանված ժամկետներում և կարգով ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին, մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետի Ժ/պ Հ.Հակոբյանին՝

Լոռու մարզում իրականացված և իրականացվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ 10-օրյա ժամկետում ներկայացնել պրեզենտացիոն ամփոփ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել ճանապարհաշինական կազմակերպությունների կողմից ասֆալտապատման աշխատանքներ իրականացնելու ժամանակ ասֆալտի քերվածքները պահեստավորելու և դրանք նպատակային նշանակությամբ օգտագործելու ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

Ներկայացնել համապատասխան տեղեկատվություն տրված հանձնարարականների (մասնավորապես հողհատկացումների որոշումների կատարման ընթացքի, ԱԳԼԾԿ-ների սանհանգույցների, տարածքների պատկանելության) և այլ հանձնարարականների կատարման վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԱՐՁԱՆԱԳՐԱԾ

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ